

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

Հաստատված է ամբիոնի նիստում

Պատմության

ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ **Ֆ. Վ. Մովսիսյան**

/Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 2

«13» սեպտեմբերի, 2023 թ.

**Պ/Բ-035 ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ԴԱՏԸՆԹԱՅԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝	<u>022201.00.6 «Պատմություն»</u>
	/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/
Կրթական ծրագիր՝	<u>022201.01.6 «Պատմություն»</u>
	/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/
Որակավորման աստիճան՝	<u>բակալավր</u>
	/բակալավր, մագիստրատուրա/
Ամբիոն՝	<u>Պատմություն</u>
	/ամբիոնի լրիվ անվանումը/
Ուսուցման ձևը՝	<u>առկա/հեռակա</u>
	/առկա, հեռակա/
Կուրս/կիսամյակ	առկա <u>4-րդ կուրս, 1-ին կիսամյակ</u> հեռակա <u>5-րդ կուրս, 1-ին կիսամյակ</u>
Դասախոս(ներ)՝	<u>Հենրի Մատինյան</u>
	/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ henri.matinyan@gmail.com

Վանաձոր- 2023թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում	3
2.	Դասընթացի նպատակը և խնդիրները	3
3.	Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները	4
4.	Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5.	Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6.	Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7.	Ուսումնական աշխատանքները տեսակները
8.	Դասավանդման մեթոդներ.....	...
9.	Ուսումնառության մեթոդները
10.	Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11.	Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....	...
12.	Դասընթացի ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ	...
	12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.....	...
	12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13.	Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում.....	...
14.	Գնահատում.....	...
	14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում.....	...
	14.2. Հարցաշար.....	...
	14.3. Գնահատման չափանիշներ.....	...
15.	Դասընթացի համառոտ նկարագրիչ.....	...

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹.

«Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության պատմություն» դասընթացը կարևորվում է պատմության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է **022201.01.6** «պատմություն» կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական կրթամասում»:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է՝

- Հայկական հարցի զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- Հայոց Ցեղասպանության և աշխարհում տեղի ունեցած այլ ցեղասպանությունների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:
- Պատմական համանման իրադարձությունների, երևույթների էական, տարբերիչ առանձնահատկությունները բացահայտելու, համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- Պատմական իրադարձությունները վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:

2.2. Դասընթացի խնդիրներն են՝

- Մովորեցնել Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության տեսական հիմքերը:
- Բացատրել Հայկական հարցի առաջացման պատճառները, Հայոց Ցեղասպանության ծրագրի նպատակները, պատմական իրադարձությունների զարգացման օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները քննարկումներով և բանավեճերով:
- Մովորեցնել ուսանողներին կատարել տվյալ ժամանակաշրջանին և պատմական միջավայրին բնորոշ հետազոտություններ, վերլուծություններ և կատարել եզրահանգումներ, ըստ արդյունքների:
- Մովորեցնել ուսանողներին վերլուծել միջազգային տերությունների վերաբերմունքի առանձնահատկությունները Հայկական հարցի համատեքստում, ըստ ժամանակի և շահի փոփոխության:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

«Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության պատմություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների հայոց պատմության, Հայաստանի պատմական աշխարհագրության և համաշխարհային նոր պատմության վերաբերյալ գիտելիքների, պատմական իրադարձությունները վերլուծելու հմտությունների առկայությունը:

կամ

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթարվիների

«Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության պատմություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը **022201.00.6** «պատմությունն է մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Հայոց պատմությունն, «Հայաստանի պատմական աշխարհագրությունն, «Եվրոպայի երկրների պատմությունն, «Ռուսաստանի պատմությունն դասընթացներից:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը² և /կամ կոմպետենցիաները.

«Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության պատմություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա Հայկական հարցի տեսական հիմունքները,
2. իմանա հայկական հարցի զարգացման փուլերը, հարցի առաջացման վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները հայ արդի հայագիտության մեջ:
3. իմանա ցեղասպանությունների ուսումնասիրման մեթոդական հիմքերը
4. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
5. տիրապետի պատմության հետազոտության մեթոդներին,
6. կարողանա հայկական հարցի լուծման գործում միջազգային դիվանագիտության դերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

- ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
- ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
- ԳԿ9** խնդիրների լուծում,
- ԳԿ10** որոշումների ընդունում:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

- ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,
- ՀԳԿ3** սովորելու ունակություն,
- ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

Բ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

- ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
- ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
- ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
- ԱԿ11** տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանալ մեկնաբանել հետազոտության արդյունքները,
- ԱԿ14** տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների,

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³.

«Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության պատմություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել դպրոցում, այլ կրթական հաստատություններում, թանգարաններում, արխիվում մասնագիտական գործունեության ընթացքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և պատմության ու ցեղասպանագիտության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	3 կրեդիտ/90 ժամ	2 կրեդիտ/60 ժամ

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն	20	4
Գործնական աշխատանք		
Մեմինար պարապմունք	16	4
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք	54	52
Ընդամենը		
Ստուգման ձևը	ստուգարք	

7. Ուսումնական աշխատանքների տեսակները⁴.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդալրճիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

- **Ռեֆլեքսա** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակերծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կունկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաձանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսք** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կունկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներն են⁶** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր....

9. **Ուսումնառության մեթոդներն են⁷** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ակտրիթմների և հրահանգների կազմում,

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում,
փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում....

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների⁸.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարամոլոնք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	ինքնուրույն աշխատանք
1.	Ներածություն: Հայկական հարցի առաջացման վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները, հայկական հարցի զարգացման փուլերը, գրականության տեսություն:	2				
2.	Դիվանագիտական պայքարը Հայկական հարցի շուրջ Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլին:	2	2			
3.	Հայկական հարցը 1880-1890-ական թթ.:	2	2			
4.	Բալկանյան պատերազմը և Արևելյան հարցի սրումը 1912թ.:	2	2			
5.	Հայկական հարցի արձարծումները միջազգային դիվանագիտության կողմից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:	4	2			
6.	Հայկական հարցը 1917-1918թթ.	2	2			
7.	Հայկական հարցը 1919-1920թթ.	2	2			
8.	Հայկական հարցը 1921-1923թթ.	2	2			
9.	Հայկական տարածքների հարցը 1945թ.:	2	2			
ԸՆԴԱՄԵՆԸ		20	16			

⁸ Նման է օրացուցային պլանին

11. Ուսումնասիրողական գրականության ապահովման քարտ

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Հայոց պատմություն, հատոր 3-րդ, գիրք 1-ին, Նոր ժամանակաշրջան (17-րդ դ. 2-րդ կես – 1918 թ.)	Երևան, 2010
2.	Հայոց պատմություն, հատոր 3-րդ, գիրք 2-րդ, Նոր ժամանակաշրջան (17-րդ դ. 2-րդ կես – 1918 թ.)	Երևան, 2015
3.	Հայոց պատմություն, հատոր 4-րդ, գիրք 1-ին, Նորագույն ժամանակաշրջան (1918 – 1945 թթ.)	Երևան, 2010
4.	Հայոց պատմություն, հատոր 4-րդ, գիրք 2-րդ, Նորագույն ժամանակաշրջան (1945 – 1991 թթ.)	Երևան, 2016
5.	Արման Կիրակոսյան, Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը	Երևան, 2006
6.	Լենդրուշ Խուրշուդյան, Հայկական հարցը	Երևան, 1995
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
*	<ol style="list-style-type: none"> 1. Հայ Ժողովրդի պատմություն, Գ.Ա. հրատ., հ.5, Ե., 1974 2. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925 3. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը 4. Լեո, Հայոց հարցի վավերագիրը, Թ., 1915 5. Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս III, Երուսաղեմ, 1927 6. Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., 1989 7. «Ատենագրությունք Ազգային Ժողովո», 1878 8. «Բարենորոգումները Հայաստանում: Ժողովածու դիպլոմատիկական դոկումենտների, Թիֆլիս, 1915 9. «Հայերի ցեղասպանությանը Օսմանյան կայսրությունում, Ե., 1991 10. Հայկական հարցը, Հայկական հանրագիտարան, Ե., 1996 11. Հայկական հարցը իսլամադարձիկի ժողովին առջև, Բոստոն, 1919 12. Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ., Սան-Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը, ԲՀԱ, հ.3, 1972 13. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1979 14. Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 1-ին, Ե., 1982, գիրք 2-րդ, Ե., 1983 15. Ջ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), 	

Ե., 1978

16. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբ., Ե., 1972թ.
17. Ա. Կիրակոսյան, Բրիտանական դիվանագիտությանը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. - 1914թ.), Ե., 1999
18. Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև
Բեյրութ, 1954
- 19 Ս. Վրացյան, Բանակցություններ Ազգային Պատվիրակության և Հայաստանի Հանրապետության միջև: Պոսթըն, 1920
- 20 Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետությունը, ցանկ. հրատ.
- 21 Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1918-1923թթ.
- 22 Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Ե., 1982
- 23 Լևոն Շանթ, Մեր անկախությունը, Բոստոն, 1925
- 24 Քաջազնունի Հ., Դաշնակցությունն անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1923
- 25 Ա. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Լոզան: Քաղաքական օրագիր Բոստոն, 1943
- 26 Ալ. Խատիսեան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը
- 27 Ա. Եսայան, «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը Ե., 1965
- 28 Ա. Եսայան, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922թթ, Ե., 1967
- 29 Մ. Եսայան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը Ե., 1965
- 30 Ա. Եսայան, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922թթ., Ե., 1967
- 31 Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918): Թրքահայոց գաղթաշարժերը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, Բեյրութ, 1966
- 32 Է. Ջոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922), Ե., 1979
- 33 Է. Ջոհրաբյան, 1920թ. հայ-թուրքական պատերազմը և տերությունները Ե., 1997
- 34 Մ. Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937
- 35 Վ. Բայբուրդյան, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում (XIX դարում և XX դ. սկզբին), Ե., 1989
- 36 Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ., Ե., 1955
- 37 Միք. Վարանդյան, Հայկական շարժման նախապատմությունը, հ. 1 ժևս, 1912
- 38 Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան Թ., 1906
- 39 Սարուխանյան, Հայկական խնդիրը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1800-1910) Թ., 1912

- 40 Շավարշ Թորիկյան, Հայկական հարցը և միջազգային օրենքը Բեյրութ, 1976
- 41 Ջավեն Մարլեան, Հայկական հարցի մասին, Պեյրութ, 1978
- 42 Գաբրիել Լազյան, Հայաստան և հայ դատը
- 43 Խ. Բաղայան, Հայկական հարցը, Ս. Ստեֆանոյի պայմանագիրը և Բեռլինի կոնգրեսը 1878թ., Ե., 1955
- 44 Բյուրատ Սմբատ, Արևելյան խնդիր և հայկական հարց, Կահիրե, 1927
- 45 Հ. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915թ.), Նոր Նախիջևան, 1915
- 46 Կ. Իզմիրլեան, Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս (քննական տեսություն) Պեյրութ, 1964
- 47 Կ. Թառոյան, Արևմտահայության ազատագրական պայքարը XIX դ. վերջին - XXդ. սկզբին, Ե., 1980
- 48 Չերազ Մինաս, Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովին, Կ. Պալիս, 1878
- 49 Բյուրատ Սմբատ, Արևելյան խնդիր և հայկական հարց, Կահիրե, 1927
- 50 Համբարյան Ա., Երտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914), Ե., 1979
- 51 Ձոհրապ Գ., Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Պեյրութ, 1976
- 52 Ատոմ, Բարենորոգումներու հարցը, Կ.Պոլիս, 1914
- 53 Լազեան Գ., Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու Կահիրե, 1942
- 54 Աղայան Օ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976
- 55 Գանգրոլի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ Բեյրութ, 1973
- 56 Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973
- 57 Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Ե., 1964
- 58 Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997
- 59 Միմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Ե., 1986
- 60 Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917թթ.Ե., 1969
- 61 Մելիքյան Վ., Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և հայկական հարցը 1917թ. , ՊԲՀ, 1-2 1994,
- 62 Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս և 1918թ. ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984
- 63 Տեր-Հակոբյան Մ., Թբքահայաստանի կորուստը և արտասահմանի հայոց ապագան: Հայ և օսմանյան հարաբերությամբ պատմության վերատեսության լույսին տակ, Բեյրութ, 1967
- 64 Սարգսյան Հ., Բրեստից մինչև Մուդրոս: Հայաստանի միջազգային իրավական և քաղաքական դրության մի քանի հարցեր, Ե., 1989

- 65 Սողոմոնյան Ա., Քինգ-Քրեյնի ամերիկյան հանձնաժողովը և Հայաստանի մանդատի հարցը, «Պատմության հարցերե, պր. 2., Ե., 1989
- 66 Ա. Նասիպեան, Բբիտանիա և հայկական հարցը, 1915-1923թթ., Բեյրութ, 1994
- 67 Բարկեն Վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան Վաղարշապատ, 1914
- 68 Ս. Կարապետյան, 1920թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Ե., 1965
- 69 Հ. Տերտերյան, Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լևոն Շանթի պատվիրակությունը, «Հայրենիք» ամսագիր, 1954, Հունվար, փետրվար, մայիս
- 70 Մըսրյան Զ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը. 1920-1921թթ.), Բեյրութ, 1979
- 71 Շահան Նաթալի, Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի), Բեյրութ, 1957
- 72 Մ. Արզումանյան, Արհավիրքից դեպի վերածնունդ
- 73 Ռ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ. Ե., 1970
- 74 Ռեմ Ղազանջյան, Բոլշևիկներն ու երիտթուրքերը: Նոր փաստաթղթեր ռուս-թուրքական հարաբերությունների մասին (1920-1922թթ.), Ե., 1998
- 75 Ռ. Փիրումյան, Հայաստանը Հ.Հ.Դ.-բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1914-1921), Ե., 1997
- 76 Сборник договоров царской России с другими государствами, 1856-1917 М., 1952
- 77 Киняпина Н. С., Внешняя политики России во второй половине XIXв.М., 1974
- 78 Б. Борьян, Армения, международная дипломатия и СССР, т. I, М.-Л. 1928
- 79 Борьян Б., Армения, Международная дипломатия и СССР, ч. I-II.
- 80 Дебидур А, Дипломатическая история Европы от Венского до Берлинского конгресса (1814-1878), Т. 1-2., М, 1968
- 81 Кургинян Е., Армянская проблема в международных отношениях, 1876
- 82 История дипломатии, т. 2, 2 изд., М., 1963
- 83 Степанян С., Армения в политике империалистической Германии, Е., 1975
- 84 Аветян А., Германский империализм на Ближнем Востоке, М., 1966
- 85 Сафрастян Р., Доктрина османизма в политической жизни османской империи, М., 1985
- 86 Будущее устройство Армении по официальным документам Оранжевой книги, трактующей реформы в Армении, Петроград, 1915
- 87 Материалы по истории франко-русских отношении за 1910-1914гг. Сборник секретных дипломатических документов бывшего Императ. Российского министерства иностр. дел., М., 1922
- 88 Киракосян А., Великобритания и армянский вопрос (90-ые гг. XIX века), Е., 1990
- 89 Диев П., Армянский вопрос в Турции, М., 1893
- 90 Ахов М., Россия и армяне, СПб, 1896
- 91 Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898
- 92 Амфитеатров А., Армянский вопрос, СПб, 1906
- 93 Гирс А., Россия и Ближний Восток, СПб, 1906

- 94 Раздел азиатской Турции, (по секретным документам б. Министерства иностр. дел), под редакцией Адамова, М., 1924
- 95 Диллон Эм., Положение дел в турецкой Армении. В книге: «Положение армян в Турции до вмешательства держав в 1895г», М., 1896
- 96 Алиев Г., Турция в период привлечения младотурок. (1908- 1918гг.)М., 1972
- 97 Контансон Людовик де, Реформы в Азиатской Турции. Армянский вопросМ., 1914
- 98 Сборник дипломатических документов Министерства иностр. дел. Реформы в Армении. 26 ноября 1913г. 10 мая 1914г., Пр., 1915
- 99 Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX - начале XX вв.Е, 1988
- 100 «Сборник договоров России с другими государствами, 1856-1917г»М., 1952
- 101 Степанян С, Армения в политике империалистической Германии, Е., 1975
- 102 Ефремов П., Внешняя политика России 1907-1914гг., М., 1961
- 103 Лудшувейт Е., Турция в годы первой мировой войны, М., 1966
- 104 Акопян С, Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Е., 1967
- 105 Готлиб В., Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1961
- 106 Панцев А., Брестский мир. Вопросы, истории, М., 1990
- 107 Живелегов А., Русская революция и Армения. „Армянский вестник,, N 10 1917
- 108 Керенский А., Жизнь, политическая деятельность и речи, Пгд., 1917
- 109 Оперовский А., Идея автономного строя Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915
- 110 История дипломатии, 2 изд., Т. 3, М. 1965
- 111 Никольсон Г., Как делался мир в 1919 г., М., 1945
- 112 Г. Г. Махмуриян, Лига наций Армянский вопрос и республика Армения. Е, 1999
- 113 Гершов З., Вудро Вилсон,М., 1983
- 114 Хауз Э. М., Архив полковника Хауза, М., 1944
- 115 Ллойд Дордж Д., Правда о мирных договорах, Т. 1-2, М., 1957
- 116 Армянский вопрос на Лозанской конференции, Извлеченная из протоколовТифлис, 1926
- 117 История внешней политики СССР 1917-1985, т. 1, М., 1986
- 118 Кузнецова С, Установление советско-турецких отношений, М., 1961
- 119 Хейфец А., Советская дипломатия и народы Востока, 1921-1927гг., М., 1968
- 120 Астахов Г., От султаната к демократической Турции. Очерки из истории кемализма, М.-Л., 1926
- 121 Шамсудинов А.М., Национально - освободительная борьба в Турции в 1918 -1923 гг.М., 1966
- 122 Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, М., 1966
- 123 Кемаль Мустафа. Путь новой Турции. 1919-1927. М., 1929. Т. I, II, III, IV,М., 1934
- 124 Ключников Ю. Б., Севр и Лозанна. К дипломатической истории Договоров. Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М., 1927
- 125 Илюхина Р. М., Лига нации. 1919-1934, М., 1982

<p>126 Leari. M., La question armenienne a la lumiere des documents, P., 1913</p> <p>127 Anderson M. The Eastern Question 1774-1923, L., 1966</p> <p>128 Langer W., Diplomacy of imperialism. 1890-1902, N. Y., 1935</p> <p>129 Grenvill J., Lord Salisbury and Foreign Policy. The Close of the Nineteenth Century, L., 1964</p> <p>130 Douglas R., Britain and the Armenian Question 1894-97, «The Historical Journal», N 19</p> <p>131 Mandelstam A., Le sort de l'Empire Ottoman, Lausanne-P., 1917</p> <p>132 Mandelstam A., La Societe des Nations et Les Puissances devant le probleme armenien, Beyrout, 1970</p> <p>133 Treaty of Peace with Turkey. Signed at Sevres, August 10, 1920, L, 1920</p> <p>134 Helmreich P., From Paris to Sevres, Columbus, Ohio, 1974</p> <p>135 Documents diplomatiques Francais 1871-1914, 3 erne serie, t. VI-IX, P. 1933-63</p> <p>136 The Joint Mandate Scheme. A Turkish Empire under Amerikan Protection New York, 1919</p> <p>137 Howard H. N, The King-Crane Commision. An American inquiry in the Middle East, Beirut, 1963</p> <p>138 Gidney J., Mandate for Armenia, Kent, Ohio, 1967</p> <p>139 Hovhannisian R, The Republiq of Armenia, vols. I-II, Berkeley, 1971-1982</p> <p>140 Documents on British Foreign Policy 1919-1939, vol. 8, L. 1958</p> <p>141 Morgenthau H, Ambassador Morgmthaus Story, N. Y. 1918</p> <p>142 Grabill J., Protestant diplomacy and the Near East, Minneapolis, 1971</p> <p>143 Aftandilian G, Armenia: Vision of a Republic, Boston, 1981</p> <p>144 Bake R., Woodrow Wilson, Life and Letters, V. 1-8, N.-Y., 1927-1939</p>	
---	--

2.		
----	--	--

Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)

1.	ՀՀ ԳԱԱ, Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը, զեկուցումների ժողովածու http://www.academhistory.am/images/grqer_2015/gitajoxov.pdf	Երևան, 2015
----	--	-------------

2.		
----	--	--

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն ⁹
1.	Ներածություն: Հայկական հարցի առաջացման վերաբերյալ	<u>Ներածություն:</u> Հայկական հարցի առաջացման վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները, հայկական	2	Տե.Բ.ս ներկայացված գրականության ցանկը

⁹ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

	ունեցող տեսակետները, հայկական հարցի զարգացման փուլերը, գրականության տեսություն:	հարցի զարգացման փուլերը, գրականության տեսություն:			
2.	Դիվանագիտական պայքարը Հայկական հարցի շուրջ Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլին:	Արևելյան հարցի սրումը: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը: Արևմտյան Հայաստանի հարցը Սան Ստեֆանոյի պայմանագրում: Հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը: 1878թ. մայիսի 30-ի գաղտնի համաձայնագիրը Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխության ենթարկելու մասին: 1878թ. հունիսի 4-ին կնքված անգլո-թուրքական գաղտնի կոնվենցիան: Մ. Խրիմյանի պատվիրակության կազմավորումը և գործունեությունը Եվրոպայում: Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագրերը: Մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում: Բեռլինի պայմանագիրը և արևմտահայությունը: Հետևանքներ և հետևություններ:		2	
3.	Հայկական հարցը 1880-1890-ական թթ.:	Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսից հետո: Բ. Դոան քաղաքականությունը: Էրզրումի հայոց կազմած բարենորոգումների ծրագիրը:		2	

